ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Ասյա Տեփանյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝
Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2025 թվականի մարտի 10-ից 21-ը:

3. Հրավիրող կողմը՝ Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Կառուցվածքային բարեփոխումներ/Structural Reforms» թեմայով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են կառուցվածքային բարեփոխումների տարբեր ասպեկտները և դրանց կարևորությունը տնտեսության զարգացման մեջ: Դասընթացը ներկայացնում էր բարեփոխումների հիմնական սկզբունքները, ռազմավարությունները և դրանք իրականացնելիս առաջացող մարտահրավերները, ինչպես նաև տրամադրում գործնական մոտեցումներ դրանց իրականացումից առաջ և հետո: Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ քննարկված գործիքակազմի գործնական կիրառմամբ:

5. Քննարկված թեմաները՝

1. Կառուցվածքային բարեփոխումներ. Հաղորդակցման ուղիներ և առաջնահերթություններ,
2. Կառուցվածքային բարեփոխումների ցուցանիշներ,
3. Մրցունակության գնահատման մեթոդաբանություններ,
4. Առևտրային բարեփոխումներ,
5. Ինչու է կառավարումը կարևոր կառուցվածքային բարեփոխումների համար,
6. Ֆինանսական հատվածի զարգացում և բարեփոխումներ,
7. Կենսաթոշակային բարեփոխումներ,
8. Կլիմայական փոփոխության տնտեսական հեռանկարներ,
9. Կլիմայական փոփոխությանն ուղղված քաղաքականություններ,
10. Արդյունաբերական քաղաքականություն,
11. Պետության ներգրավվածության ճիշտ մակարդակի որոշում,
12. Քաղաքականության առաջնահերթությունների բացահայտում. ՏՀԶԿ-ի Կառուցվածքային քաղաքականության տարեկան հսկողություն,
13. Global Value Chain ցանցին ինտեգրման քաղաքականություններ,

14. Ներդրումային ֆինանսավորման մեջ ենթակառուցվածքների դերը և խոչընդոտները,
15. Տարածաշրջանային անհավասարություններ,
16. Բարեփոխումների սոցիալական ազդեցությունը,
17. Ավտոմատացում, արհեստական բանականություն և աշխատատեղեր. Աշխատատեղերի քանակ, հմտություններ, անհավասարություն,
18. Կառուցվածքային բարեփոխումները գործնականում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում իրականացվել են գործնական խմբային աշխատանքներ: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, կատարվել են կառուցվածքային բարեփոխումների ցուցանիշների հաշվարկներ, կառուցվածքային բարեփոխումների շահագրգիռ կողմերի քարտեզի կազմում, բարեփոխումների առաջնահերթությունների դասակարգում, ավտոմատացման դրական և բացասական կողմերի քննարկում և այլն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ընթացքում որոշումների ընդունում և փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացից ստացված գիտելիքները և առանձին երկրների փորձերի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված հմտությունները կկիրառվեն ընթացիկ աշխատանքներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

27 մարտ, 2025թ.